ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԸ

(1)

ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Տիրոջ աշակերտներն ունեն
Եռամեկ Աստծու իրական ներկայությունը՝
որպես իրենց չափազանց մեծ ուրախության,
ինչը նրանց դարձնում է մարդիկ, որոնք «հիսուսամարդկային» են,
որոնք քաղցր, հմայիչ և գրավիչ են նրանց համար,
ում հետ նրանք շփվում են,
և որոնք առանց խաբեության ու կեղծավորության են:

Հավիտենական կյանքը
Աստծու կյանքն է՝ աստվածային բնությամբ,
Եռամեկ Աստված Աստվածաշնչի կառուցվածքն է,
և Աստված Իրեն թաքցնող Աստված է՝
թաքցված Աստված:

Աճելով աստվածային կյանքում
Քրիստոսի՝ որպես կենդանի քարի մեջ՝
մենք փոխակերպվում ենք թանկագին քարերի.
փոխակերպման գործընթացի միջոցով
Եռամեկ Աստված ներդրվում է մեր մեջ և
մեզ հետ մեկ ամբողջական կառուցվածք է կազմում՝
Իր շնորհքի փառքի գովքի համար,
որով Նա մեզ շնորհատրեց Սիրեցյալի մեջ,
որպեսզի դառնանք Նոր Երուսաղեմը՝
որպես ողջ Աստվածաշնչի եզրափակումն
ու բարի լուրը տիեզերքի համար:

Քրիստոսը Փեսան է, եկեղեցին՝ որպես Քրիստոսի հարսը,
պետք է լինի ռազմիկ, որպեսզի հաղթի Աստծու թշնամուն,
և հոգևոր պատերազմի շնորհիվ
Աստծու հավիտենական մտահղացումը
լիովին իրագործվում է:

© 2026 Living Stream Ministry

Առաջին հաղորդում

Աշակերտներ, հավատացյալներ, սրբեր և քրիստոնյաներ

Գրվածքների ընթերցում. Մտթ 5:1, 28:19, Բ Կրթ 6:14-16,
Ա Կրթ 1:2, Ա Պտ 4:16

I. Մենք Քրիստոսի աշակերտներն ենք՝ նրանք, ովքեր հետևում են Քրիստոսին և սովորում են Քրիստոսն ըստ այն բանի, ինչպիսին իրականությունն է Հիսուսի մեջ, այսինքն՝ ըստ այն բանի, ինչպիսին Հիսուսի աստվածամարդկային ապրելակերպի փաստացի վիճակն էր՝ նկարագրված չորս Ավետարաններում. սա Քրիստոսին փորձառաբար ապրելն է Նրա փորձառությունների մեջ, այնպես որ մենք դառնանք Նրա օրգանական վերարտադրությունը և կրկնապատկումը, որպեսզի Նա ձեռք բերի Իր ընդհանրական արտահայտությունն Իր փառքի համար եկեղեցում և Նոր Երուսաղեմում՝ Մտթ 5:1, 28:19, Եփս 4:20-4, 3:21, Եսյ 43:7, Հյտ 21:11.

Ա. Մենք այն բանը սովորելու գործընթացում ենք, որ չլինենք բնական մարդ, այլ լինենք Աստվածամարդ, որն ապրում է աստվածային կյանքով՝ ուրանալով իր բնական կյանքն ըստ Քրիստոսի՝ որպես առաջին Աստվածամարդու նմուշի. սա Քրիստոսը սովորելն է և ուսուցանվելը Նրա մեջ, ինչպես իրականությունն է Հիսուսի մեջ՝ նորոգվելով մեր մտքի հոգում Աստծու խոսքի շնորհիվ, որպեսզի դառնանք նոր և ընդհանրական Աստվածամարդ՝ Եփս 4:23, Երկ Օր 17:18-20.

1. «Եթե հարակայեք Իմ խոսքում, ճշմարտապես Իմ աշակերտներն եք. և ճշմարտությունը կիմանաք, ու ճշմարտությունը կազատի ձեզ»՝ Հվհ 8:31-32, 36, 15:7:
2. Այն բանի շնորհիվ, որ աղոթքաընթերցում ենք Գրվածքները և ականջ ունենք լսելու, թե ինչ է Հոգին ասում եկեղեցիներին խոսքի սպասավորության միջոցով, Տերը մեզ աշակերտներ է դարձնում մտքի նորոգումով մեր փոխակերպվելու միջոցով՝ Եփս 6:17-18, Հյտ 2:7, Հռմ 12:2, Եփս 4:23:
3. Մեր մտքում նորոգվել նշանակում է ձերբազատվել մարդկային կյանքի բաների վերաբերյալ բոլոր հին պատկերացումներից՝ ընդունելով Աստծու նոր մտքերը Սուրբ Գրվածքների ուսմունքի և Սուրբ Հոգու լուսավորման միջոցով՝ Սղմ 119:105, 130:
4. Տիրոջ աշակերտները լինելու համար, որոնք փրկվում են հենց Քրիստոսի՝ որպես կյանքի մեջ, որպեսզի կյանքում թագավորեն Սատանայի, մեղքի և մահվան վրա, մենք պետք է վերակազմվենք Աստծու սուրբ խոսքով, այնպես որ ուսուցանվենք, ղեկավարվենք, կառավարվենք ու վերահսկվենք Աստծու խոսքով՝ Հռմ 5:10, 17, Երկ Օր 17:18-20, Բ Տմթ 3:15-17:

Բ. Քրիստոսը սովորել նշանակում է փոխարինվել Քրիստոսով՝ ուտելով Քրիստոսին. իրականությունը, որը Հիսուսի մեջ է (անհատական

Հիսուսի աստվածամարդկային ապրելակերպը) դառնում է Քրիստոսի Մարմնի իրականությունը (ընդհանրական Քրիստոսի աստվածամարդկային ապրելակերպը) Քրիստոսին մեր ուտելու շնորհիվ, որպեսզի վայելենք Քրիստոսին՝ որպես մեր մատակարարող, եռանդ հաղորդող, զորացնող և ընդունակ դարձնող մատակարարման, այնպես որ մենք ընտրենք ու կատարենք Աստծու կամքը Նրա փառքի համար եկեղեցում՝ Հվի 6:57, Եսյ 7:14-15, Հվի 17:4, Եբր 5:8, Փլպ 2:8, Հվի 6:63, Երմ 15:16, Եբր 4:16, Հռմ 5:5, 17, 12:2, Բ Կրթ 5:14, Եփս 3:20-21:

Գ. Մենք Քրիստոսը սովորում ենք այն բանի շնորհիվ, որ Նա մեզ արթնացնում է առավոտ առ առավոտ, որպեսզի կարողանանք ուսումնառուի լեզու ունենալ՝ հոգնածներին խոսքով ամրապնդելու համար. որպես Տիրոջ աշակերտներ՝ Նրա ուսումնառուներ, մենք պետք է հենվենք Նրա վրա, ապավինենք Նրա անվանը և մեր սեփական լույսը չառաջացնենք՝ Եսյ 50:4-5, 10-11:

Դ. Մենք սովորում ենք Քրիստոսը՝ որպես Նա, ով հեզ է և սրտով խոնարհ, որպես Նա, ում լուծը հարմար է և բեռը՝ թեթև, որպես Նա, ով տալիս է Իրեն՝ որպես հանգստի (կատարյալ խաղաղության և լիակատար բավարարության) մեր շնչերի համար՝ Մտթ 11:28-30:

Ե. Մենք սովորում ենք Քրիստոսը՝ որպես բավարարության մեր ներքնակվող գաղտնիքը, որպեսզի արտահայտենք Աստծու հատկանիշները Քրիստոսի մարդկային առաքինությունների մեջ՝ ապրելով Նրան Իր մեծարման համար ցանկացած միջավայրում և բոլոր իրավիճակներում ու հանգամանքներում՝ Փլպ 4:5-13:

Զ. Մենք սովորում ենք Քրիստոսը՝ որպես Նա, ով ողորմություն է ուզում ըստ Իր սիրող ու ներող սրտի և Իր հովվող ու փնտրող հոգու՝ Մտթ 9:12-13:

Է. Աշակերտները, որոնք երեքուկես տարի հետևում էին Տիրոջը, տեսնում էին, թե Նա ինչ էր անում, ինչպես էր վարվում և ինչպես էր խոսում. կյանքի և իրականության Հոգին, որը փչվել էր նրանց մեջ (Հվի 20:22), ուղղորդելու էր նրանց այն բանի ողջ իրականության մեջ, ինչ իրենք տեսնում էին Տիրոջ մեջ (16:13):

Ը. Տեր Հիսուսը մարդ էր, ով ապրում էր մարդկային կյանքով հարության մեջ, ոչ թե Իրենով, այլ մեկ այլ ակունքով՝ Իր Հորով. երբ մենք մեր մարդկայնության մեջ ապրում ենք մեկ այլ կյանքով՝ Քրիստոսով, ով բնակվում է մեր մեջ, այդպիսի ապրելակերպը մեզ դարձնում է Տիրոջ իսկական աշակերտներ:

Թ. Տիրոջ աշակերտներն ունեն Եռամեկ Աստծու իրական ներկայությունը՝ որպես իրենց չափազանց մեծ ուրախության, որը նրանց դարձնում է մարդիկ, որոնք «հիսուսամարդկային» են, որոնք քաղցր, հմայիչ և գրավիչ են նրանց համար, որոնց հետ նրանք շփվում են, և որոնք առանց խաբեության ու կեղծավորության են՝ Մտթ 1:23, Սղմ 43:4, Հռմ 14:17, Նեմ 8:10, Փլպ 1:25, 4:5, 8-9, Ա Տմթ 4:15-16:

Ժ. Քրիստոսի հետևորդները աշակերտ էին դառնում՝ սովորելով երկրի վրա Քրիստոսի՝ որպես Աստվածամարդու նմուշի մարդկային կյանքի օրինակով, Նրա, ով ապրում էր Աստծուն՝ ուրանալով Իրեն մարդկայնության մեջ (Հվի 5:19, 30). սա հիմնովին փոխեց նրանց պատկերացումը մարդու մասին (Փլպ 3:10, 1:21ա):

ԺԱ. «Վերականգնման մեջ ես տասնութ տարի շարունակ հետևում էի, թե ինչպես է Վոչման Նի եղբայրը գործում: Այն ամենը, ինչ նրա մեջ տեսնում էի, ուսուցանում էր ինձ» («Կենսական խմբերը», էջ 33):

II. Մենք Քրիստոսին հավատացողներ ենք, որոնք կյանք ունեն և ապրում են Աստծու Որդու հավատքով. հավատքն ի չիք է դարձնում մեզ և մղում է ապրելու Աստծուն, արտահայտելու Աստծուն և մարդկանց մեջ սպասավորելու Աստծուն՝ Բ Կրք 6:14-16, Հռմ 1:17, Եբր 11:6, Գղտ 2:20.

Ա. Քրիստոսին հավատացողները (Հվի 3:15-16) Ադամից փոխադրվել են Քրիստոսի մեջ (Ա Կրք 15:22), նրանք վերածնվել են՝ Քրիստոսի մեջ նոր ստեղծագործություն լինելու համար (Բ Կրք 5:17), նրանք Քրիստոսի հետ միության մեջ են Նրա հավիտենական կյանքում, և նրանք միանում են Քրիստոսին՝ Նրա հետ մեկ հոգի լինելու համար (Ա Կրք 6:17).

1. Որպես Քրիստոսի հավատացյալներ՝ մենք երկու անգամ ենք ծնունդ առել. առաջին անգամ մենք ծնունդ ենք առել, որպեսզի դառնանք բնական մարդ, բայց մի օր մենք վերածնվել ենք, որպեսզի վերստին ծնվենք աստվածային, հավիտենական կյանքի օգնությամբ՝ Հվի 3:6-7:
2. Մեր երկրորդ՝ հոգևոր ծննդյան վկայականը տեսնում ենք Հռմ 8:16-ում, որտեղ ասվում է, որ Հոգին վկայում է մեր հոգու հետ, որ մենք Աստծու զավակներ ենք. մեր աստվածային ու առեղծվածային ծննդյան վկայականը մեր կրկնակի հոգին է՝ Հոգին մեր հոգու հետ, որը մեկ հոգի է դարձել Տիրոջ հետ:

Բ. Երբ մարդը լսում է Քրիստոսին, ճանաչում Նրան, հիանում Նրանով և գնահատում Նրան, Նա մարդու մեջ հավատք է առաջացնում՝ մարդուն թույլ տալով ներհավատալու Իրեն. այսպիսով՝ Նա մարդու մեջ դառնում է այն հավատքը, որով մարդը հավատում է Նրան՝ Եբր 12:2:

Գ. Հավատքը գալիս է խոսքը լսելուց. երբ մենք լսում ենք Քրիստոսին ու հպվում Նրան՝ որպես Աստծու կենդանի խոսքի Աստծու գրված խոսքում, Նա դառնում է կիրառված խոսքը՝ որպես Հոգին, որը բաշխվում է մեր մեջ՝ դառնալով մեր հավատքը. այսպիսով՝ հավատքն Աստված է, ով մարմնավորված է Քրիստոսի մեջ և մեզ համար իրական է դառնում որպես Հոգին՝ միաձուլված մեր հոգու հետ՝ Հռմ 10:17, Հվի 1:1, 5:39-40, 6:63:

Դ. Հավատքի լսելն արթնացնում է մեր գորովալի հիացմունքը, և որքան շատ ենք սիրում Տիրոջը, այնքան շատ է հավատքը գործում՝ մեզ բերելով համաբովանդակ Հոգու հարստության և Նրա բերած շահավետության մեջ՝ Գղտ 3:2, 5, 5:6:

Ե. Հռմ 12:3-ում ասվում է. «....որ իր մասին ավելին չմտածի, քան հարկ է մտածել, այլ այնպես մտածի, որ զգաստամիտ լինի, ինչպես Աստված յուրաքանչյուրին հավատքի չափ հատկացրեց».
   1. Մեր մասին ավելին մտածելը, քան հարկն է՝ առանց զգաստամտության ունենալու, ի չիք է դարձնում պատշաճ կարգը Մարմնի կյանքում. Աստված մեզ միևնույն հավատքն է տվել որակով, բայց ոչ քանակով. քանակի հարցը կախված է նրանից, թե ինչպես ենք աճում. եթե այսօր աճենք այնպես, ինչպես Պողոս առաքյալն էր աճում, ապա հավատքի բաժինը, որ ստանում ենք, մեծապես կընդլայնվի:
   2. Աստծու կողմից հավատքի չափ հատկացնելը կախված է մեր տրամադրվածությունից. եթե զգաստամիտ չենք (մեր մասին մտածում ենք ավելին, քան հարկ է մտածել՝ մյուսներին մեզնից ավելի գերազանց չհամարելով և կարծելով, թե ինչ-որ բան ենք, երբ ոչինչ ենք), Աստված չի մեծացնի մեզ հատկացվելիք հավատքի չափը և հնարավոր է՝ նույնիսկ կփոքրացնի այն՝ Փլպ 2:2-3, Գղտ 6:3, Ա Կրթ 8:1-3:

Զ. Մենք՝ հավատացյալներս, ապրում ենք հավատքով Քրիստոսի հետ հետևյալ փոխհարաբերություններում.
   1. Քրիստոսը որթն է, իսկ մենք Նրա ճյուղերն ենք՝ Հվի 15:1-8:
   2. Քրիստոսը Գլուխն է, իսկ մենք Նրա անդամներն ենք՝ Ա Կրթ 12:27:
   3. Քրիստոսը կյանքի շնչառությունն է, կյանքի ջուրը և կյանքի հացը, իսկ մենք Նրան շնչողներն ենք, ուտողները և խմողները՝ Հվի 20:22, 4:10, 14, 7:37-39ա, 6:35, 51-63, 68:
   4. Քրիստոսը Փեսան է, իսկ մենք Նրա հարսն ենք՝ 3:29, Եփս 5:25-27, Հյտ 19:7-9, Բ Կրթ 11:2-3:
   5. Քրիստոսը որբերի Հայրն է, իսկ մենք որբերն ենք, որոնք դարձել են Նրա զավակները և վայելում են Նրա հոգատարությունն ու Նրա ազատագրելը, որը ենթադրում է ամեն օր Նրա ազատելն ու փրկելը՝ Հվի 14:18, Սղմ 68:5-6, Եսյ 9:6, 22:19-22, Հվի 1:12-13, 14:10, Սղմ 107:1-43, 110:4, Հյտ 2:1, 7, Եբր 7:25, Հռմ 5:10:
   6. Քրիստոսը մեր Բժիշկն է, իսկ մենք Նրա հիվանդներն ենք. մենք վայելում ենք Նրան՝ որպես մեզ Բուժողի, ով դառնում է մեր ներումը, վայելքը, ուրախությունը, բավարարությունն ու ազատությունը՝ Ելց 15:23-26, Մրկ 2:1-3:6:
   7. Քրիստոսն աշխարհի լույսն է, իսկ մենք Նրա հետևորդներն ենք, այնպես որ մենք կարող ենք ունենալ կյանքի լույսը և լինել Նրա ցրիչը, որը տարածում է աստվածային լույսը՝ Հվի 8:12, Մտթ 5:14-16, Փլպ 2:12-16, Ա Հվի 1:5, 7, 9, Հյտ 21:23:

III. Մենք Աստծու սրբերն ենք, որոնք առանձնացվել ու սուրբ են դարձվել առ Աստված՝ Հռմ 1:7, Ա Կրթ 1:2, 30, հմմտ Թվց 6:1-9.

Ա. Մենք սրբացվել ենք Նրա փրկագնող արյամբ ըստ դիրքի՝ Եբր 13:12:

Բ. Մենք սրբացվում ենք Նրա սուրբ բնությամբ ըստ նախահակման՝ Բ Թսղ 2:13, Եբր 2:10-11, Ա Կրթ 6:11, Եփս 5:26, Ա Թսղ 5:23-24:

IV. Մենք քրիստոնյաներ ենք՝ «Քրիստոսամարդիկ», որոնք մեկ են Քրիստոսի հետ և ունեն Քրիստոսին՝ որպես իրենց առատապես մատակարարող բովանդակության, Նրա հետ օրգանական միության մեջ, որպեսզի ապրենք Նրան՝ մեր ամենօրյա կյանքում Նրա մեծարման համար՝ Գրծ 11:26, 26:28, Ա Պտ 4:16, Ա Կրթ 6:17, Բ Կրթ 4:7, Փլպ 1:19-21ա.

Ա. Քրիստոնյա լինելու նպատակը և ճակատագիրը, որն Աստված սահմանել է մեզ համար Իր տնտեսության մեջ, այն է, որ քայլենք Հոգով, որպեսզի Քրիստոսին ապրենք Աստծու փառքի, Աստծու արտահայտության համար՝ Գղտ 2:20, 5:16, 25, 6:17, Եսյ 43:7, Ա Կրթ 6:20, 10:31:

Բ. Յուրաքանչյուր քրիստոնյա այս երկրի վրա ունի հատուկ ճանապարհ, որը Տերը նշանակել է նրան՝ որպես Քրիստոսի գործառող անդամներից մեկի, Նրա Մարմնի կառուցման համար. նա ինքը պետք է այդ ճանապարհն անցնի. ոչ ոք չի կարող փոխարինել նրան, ոչ էլ նա կարող է որևէ մեկին փոխարինել՝ Գրծ 13:22, 25, 36, 20:24, Ա Կրթ 9:24, 12:14-22, Բ Տմթ 4:7-8:

© 2026 Living Stream Ministry